



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ. Ի. ՄՈՅՍԵՅԵՎԻՉ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1905—1907 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Մ Ը

1928.

47

Գ. Ի. ՄՈՏՍԵՅԵՎԻՉ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1905—1907 թ.



Պ Ե Ց Ը Կ Ը Ն Հ Ի Ր Ց Ը Բ Ը Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 889

A I
8621

ՊԱՏ. № 760, ԳՐԱՌԵՊԳԼԻՎԱՐ 1467 (Բ)

ՏԻՐԱԺ—2000

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 1 ԻՆ ՏՊԱՐԱՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Քայքայված և աղքատացած պաշտպանութիւնը, վոր կալվածատերերի խոշոր կալվածքների կողքին չարչարվում եր իր խղճուկ հողային նաղեւնիների վրա, խոշոր արդյունաբերութիւնից անգթորեն չահագործ—վող բաղմաթիւ բանվոր դասակարգը և բուրժուազիան, վորի գործունեւութիւնը զարգացման արդեւք եր հանդիսանում ցարական—կալվածատիրական կարգը,—մի խոսքով՝ հասարակութիւնը բոլոր դասակարգերը բա—վականաչափ պատճառներ ունեյին՝ առելու համար ինքնակալութիւնը և ձգտելու վոչնչացնել այն:

Ռուս—ճապոնական անհաջող պատերազմը, վոր պարզ կերպով ցույց տվեց, թե ինքնակալութիւնը ու—ժիմն ինչքան եր ուժասպառ արել յերկիրը,—ընդհա—նուր ղեգդհութիւնն ավելի ուժեղացրեց. հարկավոր եր միայն մի խթան, վոր շարժումն սկսվեր:

Այդպիսի խթան հանդիսացավ հունվարի 9-ը. ցարը հրացանի բռնեց Պիտերի բանվորներին, վորոնք ուղե—վորվել եյին դեպի պարստ և «թագավոր—հայրիկին» ուղղած աղերսագրով խնդրում եյին «թեթեացնել ժո—ղովրդի ծանր վիճակը»: Այդ համադարկները մեռցրին բանվորական մասսաների վերջին հավատը դեպի ցարը:

Յերկրում առաջացան խռովութիւններ: Գործա—դուլները, բողոքի ցույցերը հետզհետե աճում եյին ու ծավալվում: Հեղափոխութիւնն սկսվել եր:

Իրավազուրկ մասսաներն սկսեցին արագորեն կաղ—մակերպվել: Բանվորները գնացին արդեն վորձված

առաջնորդի՝ սոցիալ-դեմոկրատիայի հետևից։ Ինտե-
լիգենցիայի և դյուղացիության մի մասը համախմբվեց
սոցիալիստ-հեղափոխականների շուրջը։ Իսկ բուր-
ժուազիան կազմակերպվեց այսպես կոչված՝ ինտելի-
գենցիայի շուրջը։

Վախեցած ցարական կառավարությունը մերթ
խառությամբ հարձակվում էր դժգոհների վրա, մերթ
շնչին գիջումներով փորձում էր հանդստացնել յերկիրը։

Սկսվող մեծ պայքարում ազգաբնակչութան առա-
ջից դնում էր բանվոր դասակարգը։ Նա 1905 թվի հոկ-
տեմբերին առանձին ցույցերից, առանձին ձևերով ելե-
րում գործադուլներ սարքելուց՝ անցավ ընդհանուր
գործադուլի, ամբողջ յերկրում կյանքը կանգնեցրեց և
արյունարբու ցարից իսկեց ազատությունների մասին
յեղած հսկածները յանխֆեստը։

Այս մանիֆեստով կառավարությունը միայն բուր-
ժուազիայի ակնկալությունները բավարարեց։ Դյու-
ղացիությունը կարիք ուներ հողի, կարիք ուներ ազատ-
վելու ծանր հարկերից։ Բանվոր դասակարգին հարկա-
վոր էյին աշխատանքի լավագույն պայմաններ՝ 8 ժամ-
յա բանվորական օր և հետագա պայքարի համար իր
բանվորական կազմակերպություններն ստեղծելու հը-
նարավորություն։ Յեվ ցարիզմի դեմ մղված պայքարն
անխուսափելիորեն փոխվեց ղինված ընդհարումների։

Բայց խուճապով ստեղծված կազմակերպություն-
ները թույլ էյին։ Բանվոր դասակարգի ղեկավարը՝
Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական բանվորական
կուսակցությունը միասնական չեր։ Մինչդեռ բայլչե-
վիկները բանվորական մասսաներին համախմբում ե-
յին, վորպեսզի դյուղացիության հետ միասնաբով՝ վրճ-

ուսկան պայքար մղեն թե՛ ինքնակալության և թե՛ կապիտալիստների դեմ, մենչեիկները բանվորներին կոչեյին անում՝ միանալու բուրժուազիայի հետ:

Իսկ բուրժուազիան՝ բանվոր դասակարգի շարժման աճումից վախեցած՝ շտապեց ինքնակալության հետ դաշն կնքել:

Դյուզաքիությունը, չունենալով կադմակերպման միասնական կենտրոն, իր բոլոր ուժերը կենտրոնացրեց տեղերում հողի համար անջատ—անջատ պայքար, մղելով դրա: Նրա մեծ մասը, մանավանդ այն, վոր դինվորական շինել ուներ հագին, հավատարիմ մնաց ցարական կառավարությանը: Զինված ցույցը հետ մղվեց:

Ֆարսկան կառավարությունն արտասահմանից փոխառություն ստանալով՝ ուժեղացավ ու սկսեց ավելի ճնշել բանվոր դասակարգին ու դյուզաքիությանը: Նա դյուզաքիական բանկի ոգնությամբ հողով բավարարեց դյուզաքիության ինքնուրույն խմբերը: Զբաղօրության մի մասին թույլ տվեց գնալու հեռավոր Սիրի: Պետական Դումայի միջոցով բուրժուազիային հնարավորություն տվեց բաղխվելու ինքնակալության հետ: Հեղափոխությունը ճնշված էր: Բանվորների և դյուզաքիների համար մղված պայքարը վերջացավ նրանց սլարտությամբ:

1905—1907 թվերի առաջին ուսսական հեղափոխությունը ցույց տվեց, վոր հեղափոխության հաղթանակի համար անհրաժեշտ են՝ բանվոր դասակարգի և դյուզաքիության սերտ միությունը, աշխատավորների դինումը և միասնական, իսկական հեղափոխական պրոլետարական կուսակցության կուռ գեկավարությունը:

1917 թվին այս բոլորը կար, և հեղափոխութեանը
հաղթեց: 1917 թվի Հոկտեմբերն ոգտագործեց 1905
թվի դասերը, և Խորհրդային Հանրապետութեան, աշ-
խատավորների հանրապետութեան Տ-ամյա գոյութեա-
նը պարզորոշ ասպնուցում և, վոր աշխատավորները
ճիշտ են ոգտագործել առաջին հեղափոխութեան փորձը:

ՀԵՂԻՆԱԿ



I. ԻՆՉ ԵՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱ- ԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ 1905 ԹՎԻՆ

Յարական կալվածատիրական կառավարութիւնը ճորտութիւնից ազատեց գյուղացիներին՝ կտրելով նրանցից 5 միլիոն դեսյատինից ամելի հող, վորից ներանք առաջ ուղարկում էին, խլեց նրանցից պիտանի հողերը և նրանց վրին վաթաթեց կես միլիարդ ուրբու. փրկանք ու խոչոր հարկեր: Գյուղացիութիւնն ուրիշ չէլք չուներ, բայց յեթե նորից վորպես ճորտ՝ ծառայութեան մտնելու կալվածատիրոջ մոտ:

Յեւ տարեց-տարի, ամեն վատ հունձից հետո, բրնակչութեան բնական աճման հետ միասին՝ գյուղացիութիւնն աղքատանում էր, քայքայվում, հողից զրրկվում և ամելացնում ձի ու ցանքս չունեցող տնտեսութիւնների թիւը: Միաժամանակ աճում էր «աղաս ձեռքերի» քանակը, վորոնք իրենց սեփական տնտեսութեան մեջ աշխատանք չունեյին ու ստիպված էին դուրսը աշխատանք փնտռել:

Այդ ժամանակներում հողագուրկ գյուղացիները կազմում էին իրենց սայոնի բնակչութեան հետեյալ տոկոսը. —

Հարավ-Արեւմտեան ռայոնում՝ Պսգալսկի, Կիլեմի	
և Վոլինսկու նահանգ.	57%
Մոլորոսսիայի ռայոնում՝ Խարկովի, Ջերնիգսկի	
և Պոլտավայի նահանգ.	44%

Թիշին Վոլգայի ափսնում՝ Սաբաաովի, Սիմբիր-
սկի, Պենզայի, Կազանի, Նիժեգորոդսկի
և Ուֆայի նահանգ. 18⁰/₀

Մերձիկան ափսնում՝ Պետերբուրգի, Պսկովի,
Նովգորոդի և Ուստյեցկի նահանգ. 5⁰/₀

Նովորոսսիյսկի ափսնում՝ Բեսսարաբ. Ներսոնի,
Տավրիկյան, Յեկատերինոսլավի նահ. և Դոնի շրջ. 35⁰/₀

Կենտրոնական-Հողապորժական՝
Կուրսկի, Ուրսովի, Տուլայի, Բյազանի,
Տասթովի և Վորո Լոֆի նահանգ. 34⁰/₀

Բելորոսսիայի ափսնում՝ Մոսկովսկի, Մինսկի,
Վիտեբսկի և Սմոլենսկի նահանգ. 8⁰/₀

Լիտովսկի ափսնում՝ Կովնույի և Գրոգն. 4⁰/₀

Ստորին Վոլգայի ափսնում՝ Սամարայի, Ուստյ-
բուրյի և Աստրախանի նահանգ. 5⁰/₀

Հյուսիսային ափսնում՝ Վոլոգդայի և Արխան-
գելսկի 10⁰/₀

Արդյունաբերական ափսնում՝ Վլադիմիրսկի, Մոսկ-
վայի, Կալուգայի, Տվերի, Յարոսլավսկի և Կոստրո-
մայի նահանգ. 17⁰/₀

Մերձուրալյան ափսն. Վոլոգդայի և Պերմի նահ. 10⁰/₀

Սրա հետ միասին շատ բայոններում հողագործի-
ների խոշոր զանգվածներ կային, վորոնք հողից ստա-
ցած յեկամուտով չեյին կարողանում իրենց գոյու-
թյունը պահել:

Ծանր հարկերը, վորոնց վճարելու համար հաճախ
գյուղացին հողից ստացած ամբողջ յեկամուտն եր տա-
լիս, ստիպում եյին, վոր դեռևս իրենց տնտեսությունը
պահպանող գյուղացիքն ել գնան աշխատանք միտուելու:

1897 թվին արդեն ընկ: Լենինը հաշվում եր մոտ 3

ու կես միլիոն հողի, վորոնց գլխավոր գբաղմունքը կուլակի և կալվածատիրոջ հողի վրա կատարած աշխատանքն եր :

Տարեց-տարի ավելանում եր աշխատանք փնտռողներին թիվը . Նովորոսսիյսկի և Մալարոսսիյսկի նահանգում այլ թիվը հասնում եր մինչև 8690-ի և ընկ . Տբրոցկու հաշվով՝ 1905 թվին ավելորդ աշխատող ձեռքերը կազմում եյին մոտ 5 միլիոն :

Այս պատճառով՝ դյուղատնտեսական բանվորների բաղմամբիլիոն մասսայի մեջ մենք հանդիպում ենք և խեղճական պրոլետարների՝ բացառապես իրենց աշխատանքով ապրող անհող դյուղացիների և իրենց խղճուկ նաղելին, իրենց հետզհետե քայքայվող տնտեսությանը կառչած կիսապրոլետարների : Սրանց մեջ կային և ավելի անկախ դյուղացի ընտանիքների ավելորդ անդամներ, վորոնք աշխատանքի եյին գնում՝ իրենց տնտեսության սրահպանման և քարելավման համար :

Կենտրոնական նահանգներում, Ուկրաինայի հյուսիսային մասում, չափազանց խիտ ազդարնակչություն կար, վոր իր յերկրում աշխատանք չուներ և աշխատանք փնտռելու համար ստիպված եր հազարավոր վերստեր հեռանալ դեպի անդրվլդյան ստեպները, Կուրան և Տավրիա :

Կարիքն եր քշում աշխատանքի գնացող դյուղատնտեսական բանվորների աշս ամբողջ մասսային : Սանիտարական սրունկտերից մեկում կատարած քննության ժամանակ պարզվել և, վոր դրանց միայն կեսը տրեխ ուներ հաղին : Յուրաքանչյուր հազար հոգուց՝ 132-ը մինչև 4-ական ուրլի փող ուներ ճանա-

սրբաբնի համար, 658-ը՝ 4—10 ուռբլի, 107 հոգի՝ 10—20 ուռբլի և միայն 11 հոգի՝ 20 ուռբլուց ավելի:

Հազար հոգուց միայն 4-ն եյին ճանապարհին տաք կերակուր ուտում և շատ քչերը սև քարթու հացից բացի ուրիշ բան ունեյին ուտելու: Միայն 30 հոգի եյին պանդոկում իջևանում: Մնացածները քնում եյին բաց յերկնքի տակ:

Մեծամասնությունը ճանապարհի փողը կուլակնեւրից, կալվածատերերից և քահանաներից եր փոխ վերցրել: Փոխ առած գումարի համար տանը մնացած ընտանիքի անդամները մեծ տոկոսով և ցած գներով պիտի աշխատեյին: այսպիսով՝ որավարձը հասնում եր մինչև 10 կ., ուտելիքը՝ բանվորից:

Վոմանք ճանապարհ ընկնելուց առաջ պրավ եյին դնում իրենց վերջին հագուստը, վերջին հորթուկն եյին ծախում, իսկ յերեմն՝ նաև վերջին հացը: Ծառերը 20—30 կոպեկով եյին ճանապարհ ընկնում, իսկ այդ փողը, ի հարկև, շուտ եր վերջանում: Տասնյակ հազարներով կարելի չե հաշվել նրանց, վորոնք յերկար ճանապարհը կարելիս մուրացկանությամբ եյին տնվում:

Թեպետ և գիտեյին, թե ինչքան խիստ եյին չահագործում այն բանվորներին, վորոնց անցազրի ժամանակն անցել եր, բայց փող չունենալու պատճառով՝ չառերը ամսական տոմս եյին վերցնում, վորովհետև ոտ միայն տասը կոպեկ արժեք:

II. ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՅԻՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿՆ

Աշխատանքի ժամերի մասին մենք վոչ մի տեղ

յուցմունքների շնորհանդիսով: Գյուղատնտեսական բանվորների աշխատանքային որն սկսվում էր արշալույսին, արևը ծագելուց առաջ և սովորաբար՝ վերջանում արևը մայր մտնելիս: Իսկ աշխատանքի յետոն չբժանում՝ միշտ և ամեն տեղ արևը մայր մտնելուց հետո ել ելին աշխատում, մանավանդ՝ սլարդ լուսնյակ գիշերներին:

Ռուսաստանի հարավային խոշոր կալվածքներում կալի ժամանակ գիշերներն ել ելին աշխատեցնում: Շոգեմեքենայի մոտ գինամո ելին դնում, աշխատանքի վայրը յեկեքորականությամբ լուսավորում, և մի բաժակ արագի համար՝ մինչև ուշ գիշեր աշխատեցնում:

Մխախտի սլանտացիաներում աղջիկները աշխատում ելին կես գիշերից մինչև ուշ յերեկո. աշխատում ելին և՛ լուսնյակ գիշերներին, և՛ մութ գիշերներին՝ լապտերների ու ջահերի լույսով, ծխախոտի հյուսիս պանիչ մթնոլորտում: 1906 թվին աշխատավորուհիները խնդրեցին թույլ տալ իրենց արշալույսից մինչև վերջալույս աշխատել, այսինքն՝ առավոտյան ժամի 3½-ից մինչև յերեկոյան ժամի 9-ը. բայց այդ նրանց մերժեցին:

Լիրերալ բուրժուազիայի «Մեր կյանք» թերթը գրում էր. «Ռուսաստանի հարավում գյուղական պրոլետարիատի «նորմալ» բանվորական որը սովորաբար տևում է 18-20 ժամ՝ հանգստին և ուտելուն հատկացրած 2-ժամյա ընդմիջումով: Այսպիսի տնտեսություններում, ուր ավելի յեն խոստանում և հաճախ վոչինչ չեն տալիս, աշխատանքն սկսվում էր առավոտյան ժամի 3-ից և վերջանում գիշերվա ժամի

1-իմ, յերբեմն և յերկուսին: Տոնական հանդստյան որեր համարյա չկային»:—

Դիտողներից մեկի հաշվով՝ Կուրանում հնձվորն որական 13 ժամ աշխատում եր, 1 ժամ զնում եր փոխվելու, $2\frac{1}{3}$ ժամ ուտելու, $1\frac{1}{2}$ ժամ՝ հանգստանալու, 1 ժամ ճաշից հետո քնելու և 1 ժամ դերանդինները սրելու, անկողին պատրաստելու, հաղնվելու և հանվելու համար, իսկ գիշերվա քնին մնում եր միայն 5 ժամ:

Անընդհատ բոցը, հայհոյանքն ու ծեծը սովորական յերևույթներ եյին: Բանվորին յուրաքանչյուր քայլափոխում ծաղրի եյին յենթարկում: Որինական և տարրինի կալանքն ու տուգանքը հաջորդում եյին իրար: Բանվորին ավելի ճղմելու համար գործադրում եյին ամեն տեսակ միջոցներ: Այսպես՝ Տալրիայում իրենք ագարակատերերն ու կոլոնիստները և իրենց վորդիք գնում եյին հնձվորների հետևից, սպառնալով մի քիչ դանդաղող հնձվորի վոտքը կտրել: Յեվ թեպես կոլոնիստ-ագարակատերերը չուկայում ընտրում եյին սովորաբար ավելի ուժեղ բանվորական ձեռքեր ու նրանց ավելի վճարում, բայց աշնանը նրանց բանվորները իրենց ուժասպառ տեսքով ու ղեղնազույն գեմքով միշտ աչքի եյին ընկնում բաղմության մեջ:

Շաքարի պլանտացիաներում՝ ճակնդեղի դարակների մոտ այսպիսի մի միջոց եր կիրառվում: Մի քանի «գոպա» հեռավորության վրա (գոպան՝ 250 սաժեն յերկարություն ունեցող ուղիք նական չափ ե) մի ձող եյին տնկում, ծայրին մի եժանադին թաշկինակ կամ ուրիշ մի աննշան բան կապում. այս պարզեւր աշխատավորուհիներից նրան եր հասնում, ով առա-

յինը կհասներ այդ ձողին: Յեւ այլ ջիւղները հալից
ընկնելով 20-25 կ. որովարձով յեռանդով աշխա-
տում եյին:

Աշխատանքի պաշտպանութեան մասին այդ ժա-
մանակներում խոսք անգամ չենել չէր կարող: Հնձող
մեքենայի վրա աշխատանքը բանվորից մեծ լարվածու-
թյուն և պահանջում և պետք և հերթով տարվի, բայց
մանր տնտեսութլւններում այդ բանը չէր կիրառ-
վում և սրա հետեանքով բժիշկ կրովացիու Պէկայու-
թյան համաձայն՝ սրտի արատով հիվանդ բաւարակ-
ների թիվը խիստ արագորեն աճում էր:

Տավրիայի ողորակատերերը լայն կերպով կի-
րառում էին մեքենաների շահագործումը: Նրանք ա-
մառվա սկզբից իրենց հովաքող մեքենաներով իջնում
էին հարավ և աշխատելով՝ աւտիճանաբար հեռ-
դառնում: Մի անգամ Ֆալ'ցֆէյնի կարվածքում հա-
յարի չափ այգալիսի ձեռնարկողներ էյին հովաքվել
իրենց մեքենաներով. մեքենաների վրա վոչ թե տե-
րերը, այլ վարձու բաւարակներն էյին աշխատում:

Կալսող մեքենաների վրա աշխատանքն ավելի
ծանր էր ու վնասակար, բայց նախազուլաւան վոչ
մի միջոց այստեղ ձեռք չէր առնվում: Դժբախտ պա-
տահարների թիվը հետզհետե ավելանում էր:

Մելիտոպոլի դավառում 1888 թ. (միայն մեկ հի-
վանդանոցում) 45 հոգի ծանր վիրավոր դիւղատան-
տական բանվորներ կային. իսկ 1896 թ. արդեն 103
հոգի:

Դնեսպրի դավառում միայն մեկ ամբողջ մեջ 300
հոգի՝ ծանր վիրավոր և 6000 հոգի թեթե վիրավոր-
ներ կային:

Սրանից առանձնապես խիստ առեւտում ելին յերե-
խաները: Խեղճոնի նահանգում 100 վերավորից 37
հոգի յերեխաներ ելին. Պոլտավայի նահանգում՝ 29,
խակ Դոնի շրջանում՝ 31:

Մինչդեռ դործարանային արդյունաբերության
մեջ 1000 հոգի հաշմանդամներից 25-ն եր մեռնում,
դյուղական տնտեսության մեջ՝ 35-ը. դործարանե-
րում աշխատունակությունից բոլորովին զրկվում ե-
լին 19 հոգի, դյուղական տնտեսության մեջ 55 հոգի:
Գործարաններում աշխատունակությունը մասամբ կոր-
ցնում ելին՝ 80 հոգի, դյուղական տնտեսության
մեջ՝ 228 հոգի:

Աշխատանքի լարվածության, հոգնածության և
պակաս քնի պատճառով հոգեկան հիվանդ բատրակ-
ների թիվն ավելանում եր:

Պետք և ի նկատի առնել այն, վոր օրենքը կալ-
վածատերերին պարտադրում եր բժշկական ողնություն
հասցնել բանվորներին «միայն հնարավոր յեղած
դեպքում»: Վաստորեն դա նշանակում եր, վոր գյու-
ղատնտեսական բանվորները վոչ մի ողնություն չեյին
ոտանում: Մեծ մասամբ առանց այլեայլի նրանց քը-
շում ելին կարվածքից: Ծանր հիվանդներն ու հաշ-
մանդամներն անխնամ ընկած ելին հյուղերում, բա-
րակներում կամ ուղղակի՝ բաց յերկնքի տակ:

Զեմստվոյի հիվանդանոցն ընկնելու բախտ ու-
նեցողն որական պիտի վճարեր 25 կոպեկ, իսկ յերբ
նա վերադառնում եր, տերը՝ բացակայելու համար
նրա վարձարությունից հանում եր չաշխատած օ-
րերի վարձը, հաշվելով նրա հիվանդության ժամանակ
յեղած օրավարձի ամենաբարձր գնով: Զեմստվոյի

իշխանավորներից մեկի դիտողութեան համաձայն՝ կալվածատերերը կործես իրենց բանվորներից հիմնդուծեան հարկն եյին հալաքում :

Վարձու բանվորների մեծ մասը տիրոջ հաշվին էր սնվում : Այդ ուտելիքի համար բանվորները շաբուհակ բողոքում էին : Սովորաբար նախաճաշին սե հաց ու ջուր էին տալիս , ճաշին՝ թանձր ապուր , ջրիկ սպասս և սե հաց , ընթրիքին՝ ապուր ու սե հաց ,— և այսպէս՝ որեցոր դարնանից մինչև աշուն : 30—40 հոգու համար որական 1 ֆունտ յուղ կամ ճարպ էին տալիս :

Մոսկվայի Գյուղատնտեսական Ընկերութեան նախագահ և խոշոր կալվածատեր՝ իշխան Շախովսկու վիպուծեամբ՝ կալվածատերերից վճանք բանվորներին տաք կերակուր միայն տոն որերին էին տալիս , բայց կային այնպիսիներն ևլ , վորոնք չէին քաշվում բանվորներին հիվանդ (թեկուզ և սիրիրական ախտով) վոչխարների մսով կերակրել :

Գյուղատնտեսական բանվորների հիմնական սրնունդն առհասարակ ալյուրն ու կորեկն էին : Բանջարեղենը , կարտոֆիլը չքեղութեան առարկաներ էին : Նույնիսկ հացի համար հատկացված ալյուրը՝ աղում էին մաղի տակ անպետք բաների հետ մնացած հատիկներից : Կերակուրը չափազանց կեղտոտ էր պատրաստվում . պղինձներն ու ամանները չարաթնեով չէին լվացվում :

Ռուսաստանի հարավում , ավելի սուր բնույթ էր ստացել ջրի հարցը : Ստեպներում ջրհորներ քիչ կան : Զուրը մի քանի վերստ հեռավորությունից էր բերվում : Զուր բերելու վրա ժամանակ չկորցնելու հա-

մար հողի մեջ մեծ փոսեր եյին փորում, քարերով չըջադատում ու ցեմենտով պատում և ջրի պաշարը պահում էյին այդ բաց հորերում: Ամրանն ի հարկե, այդ ջուրը հոտում էր. փոշ միայն խմել, այլ նրանով լվացվել անգամ չեր լինում. բայց բանվորներն ստիպված էյին այդ ջուրը խմել:

Բնակարանային հարցը յեկվոր բանվորների, նաև տեղացի բանվորների մեծ մասի համար պակաս կարելիոր դեր չեր խաղում: Բայց հարավային տնտեսությունների մեծ մասում կաղարձաներ չկային, և բանվորները խմբերով դիչերում էյին ստեղներում, բաց յերկնքի տակ:

Յերբ աշնան սկզբներին բանվորներն իրենք էյին փորձում ծղնոտից աներ շինել, տերեւն արգելում էյին, քանի վոր նրանք ծղնոտն ամելի էյին արգելում, քան բանվորներին:

Սակայն յեղած կաղարձաններն ել զղվելի չինություններ էյին. խոնավ, խարխուլ շենքեր, ծղնոտն տանիքով, կխախարխուլ առատաղով, վոր ամեն րոպե սպառնում էր փուլ գալ, խոր փոսեր ունեցող հողե հատակով, նեղ, կեղտոտ թախթերով և հենց նույն տեղում չինված խոհանոցով:

Ուրիշ կալվածքներում հյուղեր էյին շինվում, վորոնց խոնավությունը, մութը, ցուրտն ու կեղտոտությունը սովորական յերևույթներ էյին: Այդ միևնույն բնակարաններում բանվորներն իրենց թաց, կեղտոտ փոխնորդն էյին չորացնում:

«Մենք չափազանց հարուստ անտեսությունների էյինք հանդիպում,—դրում էր բժիշկ Պիտնյաչեվսկին,— վորտեղ յեկեքտրականությամբ լուսավորված գոմերի


կողքին բանվորներն ստիպված էին սլառկել չափա-
դանց կեղտոտ խողանոցներում» :

Գյուղատնտեսական բանվորները աշխատավարձը
չափազանց անկայուն էր. ամեն ինչ կախված էր այն
բանից, թե բերքն ինչպիսի չէր, թե տվյալ տեղում
ինչքան բանվորներ էին հավաքվել և ինչ քանակու-
թյամբ գյուղատնտեսական մեքենաներ կային այդտեղ :

1892
H
Լինում էր հաճախ, վոր թեպետ հացի բերքը լավ
էր, բայց վորովհետև այդ չրջանում, մեծ թվով բան-
վորներ էին հավաքվել, դները նույնիսկ վատ բեր-
ունեցող տարվա դներից էլ ցած էին լինում :
Բայց պատահում էր նաև, վոր մինչև անգամ միջակ
բերք տվող տարում դները շատ էին բարձրանում,
յեթե բանվորական ձեռքերը քիչ էին լինում :

Բայց բանը նրանումն է, վոր գյուղատնտեսական
բանվորների մեծ մասը աշխատանք վնասելիս դողա-
փար չունեի յերբեք վոչ բերքի չափի և վոչ էլ բան-
վորական ույթի պահանջի մասին : Յեւ վրա համար
էլ՝ համարյա ամեն տեղ կրկնվում էր այն, վոր բան-
վորների մասուն՝ հավատարով անհայտ մարդկանց
(գուցե և լրտես գործակատարների) կողմից տարած-
ված լուրերին՝ հավաքվում էր մի վորոչ տեղ, դները
պցում էր և այնուամենայնիվ աշխատանք չէր դրո-
նում, իսկ նրանից վոչ հեռու, մի ուրիշ տեղ, հացա-
հատիկները չորանալով թափվում էին, բանվորներ
չլինելու պատճառով :

Բանվորների աշխատավարձն էլ միատեսակ չէր.
նա կախված էր աշխատանքի ժամանակից, բնույթից,
վարձվելու ձևից, թե արդյոք բանվորը մի տարով և
վարձվում, փոխադրված, պայմանավորված, մի ամսով, մի



չարաթո՞վ, թե որավարձով կամ գործարքով և վարձ-
ված, ուտելիքն իրենի՞ց և լինելու, թե՞ տիրոջից,
վարձը փողո՞վ և տրվելու, թե՞ մթերքներով :

Յեթե մենք որինակի համար վերցնելու լինենք իր
ուտելիքով վարձված չափահաս բանվորի որավարձը
այսինքն՝ ամբողջ տարվա համար միջին վարձը, ապա
կտեսնենք, վոր Դրողդովի հաշիվների համաձայն՝
1905 թվի նախորդակին այդ միջին աշխատավարձն ամ-
բողջ յերկրում հավասար եր որական 64 կոպեկի, ա-
ռանձին չրջաններում նա իջնում եր մինչև 48 կոպեկ և
78½ կոպեկից ավելի չեր բարձրանում : Կանայք սո-
վորաբար տղամարդկանց վարձատրության կեսն եյին
ստանում :

Մեծ քանակությամբ մեքենաներ ունեցող խոշոր
կալվածքները գերադասում եյին բանվորներին տարւով
կամ մի վորոշ պայմանաժամով վարձել : Ավելի մանր
տնտեսություններում վորոշ պայմանաժամով վարձ-
վածները կազմում եյին բանվորների հիմնական կա-
դրը : Բայց այուամենայնիվ կային աշխատանքներ,
որինակ՝ խոտ ու հաց հավաքելը, վոր գլխավորապես
մի շաբաթով կամ որավարձով աշխատող բանվորներն
եյին կատարում : Մինչև 1905 թիվը բանվորական ձեռ-
քերի գինն ընդհանրապես ընկնում եր, մինչդեռ ամե-
նատնհրաժեշտ առարկաների գները բարձրանում եյին :

Դրողդովի տված թվերը վերցված են՝ Հողագոր-
ծության նախկին մինիստրին կալվածատերերի ներկա-
յացրած տեղեկություններից : Հասկանալի չե, վոր
կառավարությունից անվերջ փոխադրություն ու նը-
պաստ հայցող կալվածատերերը պետք և աշխատելին
ցույց տալ, թե աշխատող ձեռքերն «ինչքա՞ն թանգ են

նասում» իրենց վրա : Սակայն բոլորովին այլ եր գործ-
նականում :

1905 թվին Պոլսի Նահանգապետն ինքը համո-
զում եր կնքվածատերերին , վոր բանվորներն աշխա-
տավարձը բարձրացնեն , քանի վոր որական 20-10 կ . ,
յերբեմն ել 5 կ . աշխատավարձը՝ նահանգապետի խոս-
տովանությամբ՝ ի հարկե պիտի գործադուլներով վեր-
ջանար :

Ամենացած աշխատավարձը հարավ-արևմուտ-
քումն եր : Հողի մեծ մասն այստեղ խոշոր կապիտալիստ-
ների ձեռքին եր . հողը մշակվում եր կատարելագործված
գյուղատնտեսական գործիքներով՝ վարձու բանվորնե-
րի ոգնությամբ : Գյուղացիության մեծ մասը հող չու-
նէր կամ սակավահող եր : Վարձողներն ոգտվում եյին
որանից՝ ապահովելով իրենց համար վոչ միայն եօան
աշխատող ձեռքեր , այլև փաստորեն բանվորներին ճոր-
տության մեջ պահելով :

Ահա որինակի համար՝ Կոմս Պոտոցկու տնտեսու-
թյան կնքած պայմանագիրը .

«Յես , այսինչ գյուղի գեղջկուհիս՝ իմ սեփական
կամքով վարձվեցի իշխան Պոտոցկու այսինչ տնտեսու-
թյան մեջ՝ գյուղատնտեսության աշխատանքների հա-
մար , ինչպիսին վոր ինձ հանձնարարեն , ընդամենը 144
աշխատանքային օրով . ուտելիքը՝ ինձանից : Ամբողջ
ժամանակվա համար վարձս լինելու յե 34 ռուբլի , վորի
հաշվին 10 ռուբլի կանխավճար եմ ստացել . իսկ մնա-
ցածը կստանամ հետո , յերբ աշխատանքս վերջացնեմ :

1. Արեւը ծագելու հետ պիտի աշխատանքի դուրս
դրամ ու աշխատեմ , մինչև արեւի մայր մտնելը :

2. Յեթե ստանց որինական պատճառներ ունենայու

աշխատանքս թողնելու լինեմ, պետք է կանխավճարս
կրկնակի չափով վերադարձնեմ, և աշխատանքի համար
վոչ մի վարձատրություն չպահանջեմ:

3. Հենց վոր ինձ կանչեն, պարտավոր եմ աշխա-
տանքի դուրս գալ:

4. Յեթե տնտեսությունը տոն կամ կիրակի որերին
ինձ վորեւ աշխատանքի կանչի, յես իրավունք չունեմ
հրաժարվելու այդ աշխատանքից:

5. Յեթե յես տոն կամ հասարակ որերին առանց
տնտեսության թույլտվության վորեւ տեղ գնամ, ապա
բացակայած որերի համար պարտավոր եմ կրկնակի աշ-
խատել:

6. Յեթե յես հիվանդանամ կամ մեռնեմ, իմ փոխա-
րեն իմ ընտանիքը պիտի աշխատանքս վերջացնի:

7. Մինչև պայմանաժամս լրանալը յես վոչ մի դեպ-
քում իրավունք չունեմ աշխատանքս թողնել: Այս պայ-
մաններն ինձ հայտնի յեն, վորի համար և ստորագրե-
րում եմ»:

Որական 23½ կոպեկի համար տնտեսությունը
ճորտացնում եր աշխատավորուհուն:

Այդ առանց այն ել ցած աշխատավարձը կալվածա-
տերերը խարդախությամբ՝ տուգանքների միջոցով ե'լ
ավելի եյին իջեցնում: Ամեն բանի համար տուգա-
նում եյին. ծուռ անցկացրած ակոսի համար, չափազանց
արագ կամ չափազանց դանդաղ քչելու համար, տնտե-
սության լճում լողանալու համար, հանդուգն պտտա-
խանների համար:

Տնտեսություններից մեկում մեքենավարին իր
ամսական ոոճիկի կեսի չափով տուգանեցին միայն նրա

համար, վոր նա ճաշից հետո մի քանի բուպե ավելի յե-
րնել:

Դյուղատնտեսական բանվորին վոչ միայն անխնա
չահագործում ելին, այլև նրան ուղածին չափ ծաղրի
եյին յենթարկում: Բուրժուական «Մեր Կյանք» թերթը
1905 թվին գրում եր. «Դեռ մինչև հիմա Հարավ-Արե-
մոյան շրջանում կարելի չե տեսնել, թե ինչպես կառա-
վարէչը շրջում և դաշտում՝ մտրակը ձեռքին, վոր ա-
մեն բուպե գործի յե դնում, հենց վոր նկատի, թե բան-
վորը վորեւ բանում հանցավոր ե:

Իսկ Խերսոնի նահանգում Պետական Խորհրդի ան-
դամ և ազնվականության նահանգային պարագլուխ՝
իշխան Տրուբեցկոյը իր խաղողի այգիներում աշխատող
բանվորներին բարեհաճում և քաթանե յերախակաշնե-
ր հազցնել: Բանվորն ինքը իրավունք չուներ յերախակա-
շը հանելու: Յերբ նա ջուր եր ուզում խմել, պետք և
դիմեր գործակատարին, վորը հանում եր յերախակաշը
և խմելուց հետո՝ նորից հազցնում:

Դոնի շրջանում կալվածատերը բանվորի հետ այս-
պիսի պայմանագիր եր կնքում— «Ալային, նրա կնոջն
ու յերեխաներին հանդիպելիս՝ բանվորը պարտավոր և
20 քայլ մի կողմ հեռանալ, առանց գլխարկի՝ լարի պես
ձգված կանգնել, մինչև վոր աղաներն անցնեն: Տերե-
րին՝ առանց բացառության՝ նույնիսկ ծծկեր յերեխա-
ներին, պատվում եյին վոչ այլ կերպ, քան՝ «իշխան
այսինչ, անուն, հայրանուն»: Աղայի տան մոտով անց-
նելիս՝ բանվորը պարտավոր եր գլխարկը հանել, թե-
կուզ պատուհանում վոչ վոք չերևար և 20—30 քայլ
անցնելուց հետո միայն ծածկեր: «Ճորտական հնազան-
դությունը (այսպես եր գրվում պայմանագրում) խախ-

տելու դեպքում՝ սպասվում եր գրամական տուգանք և նույնիսկ կալանք։ Կալանավորին փակում եյին ամբարում կամ նկուղում։ Այդ իշխանի մոտ յերկու ամիս ծառայող բանվորներից մեկը 8 սուրյով տուգանվել էր և 6 անգամ ձերբակալվել։

Սարատովի նահանգի տնտեսությաններից մեկում 452 բանվորներից 51-ը միայն չէր տուգանվել։ Իսկ մր-նացածներից՝ 88 հոգի՝ աշխատանքի մեկ քառորդը տվել եյին տուգանքի, 122 հոգի՝ մեկ յերրորդից ավելին, 69 հոգի՝ կեսից ավելին, 85-ը՝ ամբողջ աշխատավարձը, իսկ 37 հոգի դեռ տնտեսությանը պարտ մնացին։

III. ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ-ՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Պարզ և միանգամայն, վոր գյուղատնտեսական բանվորն իր վողջ ճնշվածությամբ ու լքվածությամբ հանդերձ՝ չէր կարող անվերջ տանել այն ծանր հարստահարումը, վորին նա յենթարկվում էր։ Յեւ 1905 թվից դեռ քառորդ դար առաջ մենք արդեն տեսնում ենք, վոր գյուղատնտեսական բանվորներն առանձին խռովություններ ու գործադուլներ են սարքում՝ վարդեն բողոք շահագործության դեմ։ Գործադուլներից ամենամեծը յեղավ Կուբանում 1902 թվին, վորին 10,000-ից ավելի մարդ էր մասնակցում։

Հունվարի 9-ի համագարկների դեմ առաջացած բողոքի շարժումը քաղաքում, բանվորների նոր սկսած պայքարը և գյուղում՝ գյուղացիական շարժման առաջին քայլերը՝ արթնացրին բաարակ մաստաներին։ Ար-

դեն մարտի սկզբից, գարնանացանին՝ Պոդոլսկի նահանգում սկսվում են գյուղատնտեսական բանվորների գործադուլները:

Ուշիցկու գավառի Սլոբկովեց գյուղի ժողովում մի խումբ գյուղատնտեսական բանվորների առաջարկությամբ վորոշվեց, վոր մոտակա վոչ մի տնտեսության մեջ չափահաս տղամարդիկ 1 ուսուցից պահաս որավարձով և կանայք՝ 50 կոպեկից պահաս չվարձվեն (իսկ գրանից առաջ՝ տղամարդիկ ստանում էին 30—40 կոպեկ, կանայք՝ 20—25 կոպեկ):

Մոտակա տնավաճառին հարևան գյուղերին և հաղորդեցին այդ մասին, որոնք համաձայնվեցին, Ամեն տեղ սկսեցին ժողովներ գումարել, աշխատավարձի «սակագներ» մշակել:

Կալվածատերերը վախեցան և... հոգևորականության ողնությանը դեմեցին: Բայց հոգևորականության խրատները չոգնեցին: Շարժումն աճում եր ու տարածվում: Աշխատողներին և սկսեցին աշխատանքից հանել: Յեւ շուտով շարժումն ընդգրկեց 3 գավառ՝ 110 գյուղ:

Վիննիցկու գավառում գործադուլներն սկսվեցին, յերբ կալվածատերերը չափահաս տղամարդու որավարձը փորձեցին իջեցնել 20 կոպեկի:

Վոլդայի վրայի յերկու գավառներում գործադուլը միաժամանակ բռնկվեց:

Առաջին հաջողությունները խրախուսում են գյուղատնտեսական բանվորներին, և 1905 թվի ամբարն գործադուլային պայքարն սկսվում է արդեն Հարավ-Արևմտյան շրջաններում, Վոլդայի վրա, Նովորոսիս-

յում, Մալարոսիայում, Բելոբոլսիայում և Լիտվա-
յում: Պայքարն ընդգրկում է 36 գավառ:

Գործադուլային շարժումն առանձնապես ուժեղ
դարգացավ Հարավ-Սերեմոյան շրջանում, շրջանի 36
գավառներից՝ 16-ում: Կիևի նահանգից գրում են, վոր
չկա համարյա մի գյուղ, մի տնտեսութուն, վորտեղ
գործադուլ չլիներ: 20—25 կ. որսվարձը տմեն տեղ
40—60 կոպեկի հասավ:

Դառն փորձից խրատված կալվածատերերը ոգնու-
թյան համար այլևս հոգևորականությանը չդիմեցին,
նրանց տնտեսությունները լցվում են կապակներով,
ոտրաժնիկներով ու դրագուններով, իսկ բանտերը՝
կալանավորված բաւորակներով: Յեւ վործադուլային
շարժումը, վոր ամբան սկզբին ուժեղ էր, հունձի ժա-
մանակ թուլացավ. շարժումը զինվորական ուժով
ճնշվեց:

Բայց ամբողջ յերկրում հեղափոխական շարժան
աճումով՝ աչնանը, գործադուլներն ավելի ևս լայնո-
րեն տարածվեցին: Շարժմանը միացան կենտրոնական,
հոգադործական, արդյունաբերական և մերձլճյան շքր-
ջանները: 58 գավառում հայտարարված էր գործադուլ:

Զմեռը համեմատաբար խաղաղ անցավ: Բայց 1906
թվի գարնանը գործադուլային շարժումը հանկարծ
լայն կերպով ծավալվեց և ընդգրկեց 31 գավառ:

Առաջին Պետական Դումայի գումարման նախորդա-
կին ցարական կառավարութունը գյուղատնտեսական
բանվորների գործադուլի մասին մի որեւէ հրատարա-
կեց, վորը գործադուլավորներին սպառնում էր իրա-
վունքներից և արտոնություններից զրկել, կալանավո-
րել, բանտարկել և աքսորել: Բայց այս որենքը, վոր

նահանգապետները լայն կերպով տարածեցին, չկարողացավ շարժումը դադարեցնել:

1906 թվի ամառը գյուղատնտեսական բանվորների պայքարի ամենակատաղի շրջանն էր: Գործադուլը ծավալեց 157 գավառում:

Կառավարութիւնը հունիսի 11-ին գյուղական գործադուլները քրեական հանցագործութիւն հայտարարեց: Իրենց ծանր դրութեան բարեկաման համար պայքարող գյուղատնտեսական բանվորները բռնվում էին վորպես գողեր և ավազակներ: Բայց պայքարն ամբողջ ամառվա ընթացքում զարգանում էր և համառու հարատե բնույթ ուներ:

1906 թվի աշնանը շարժումը մեղմանում է: Գործադուլը շարունակվում է միայն 15 գավառում:

1907 թվին ամբողջ յերկրում հեղափոխութեան ալիքն ընկնում է: Գյուղատնտեսական բանվորների շարժումը խիստ կերպով նվազում է:

Փարնանը դեռևս 10 գավառում շարունակվում էր գործադուլը, ամբանը շարժումն ուժեղացավ և ընդգրկեց 28 գավառ, բայց աշնանը բոլորովին մեղմացավ: Գյուղատնտեսական բանվորները ճնշված էին:

Յեթե ընդհանուր հեղափոխական պայմանների նպաստում էին գյուղատնտեսական բանվորների պայքարին, ապա այդ տարիների առատ բերքը չափազանց աննպաստ հանգամանք էր դրս համար:

1905 թիվը վատ բերքի տարի էր: Յեվրոպական Ռուսաստանի յերկու յերրորդը վատ բերք ուներ: Յեվրոպական Ռուսաստանի 50 նահանգներում ընդամենը 2.814.929 հազար փութ հաց էր համաքվել (բացի վար-

աակից) : Սա նախորդ տարվանից 569,700 հազար փութով , համարյա 20 տոկոսով պակաս էր :

